

ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՁ «ՔՈՐՈՆԱ» ԺԱՅՐՈՎ ՎԱՐԱԿՈՒԱՇՆԵՐՈՒՆ ԹԻԻԸ ՀԱՍԱԻ 1220-Ի, ՄԱՀՈՒԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐՈՒՆԸ ՀԱՍԱԻ 27-Ի, ԻՍԿ ԲՈՒԺՈՒԱՇՆԵՐՈՒՆ ԹԻԻԸ 712-Ի

ՄԻՆՉ ԼԻԲԱՆԱՆ ԿՈՒՂՂՈՒԻ ԳԷՊԻ ԲՆԱԿԱՆՈՆԱՅՈՒՄ ԺՈՂՈՎՐԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԻ ՅՈՅՑԵՐԸ ԴԱՐՁԵԱԼ ՀՐԱՊԱՐԱԿ ԿԸ ՎԵՐԱԴԱՌՆԱՆ

Այս շաբաթ կ'ամբողջանայ «Քորոնա» համաճարակի ճգնաժամին դեմ պայքարելու ծիրին մեջ գործադրուող ընդհանուր զօրաշարժը, միակ տարբերությամբ, որ կրակմարի դրույթինը պիտի սկսի կես գիշերին եւ պիտի տեսէ մինչեւ առաւօտեան ժամը 5:00՝ շարունակելով ներառել ինքնաշարժի զոյգ թէ անզոյգ թիւերով երթեկեկելու իրաւունքը, ինչպէս նաեւ հետիոտն ու ինքնաշարժով փոխադրուողներուն դիմակ կրելու պարտադրանքը:

Ներքին գործոց նախարարութիւնը այս մասին երէկ հրապարակեց իւր շրջաբերական մը, իսկ հանրօգուտ շինութեանց եւ փոխադրութեան հարցերու նախարար Միշել Նաժժար հաւանական նկատեց, որ Պէյրութի միջազգային օդակայանը իր դռները վերաբանայ, եւ քաղաքացիական օդանւորութիւնը վերսկսի 21 յունիս 2020-ին: Ան նկատել տուաւ նաեւ, թէ նախատեսելի է, որ կառավարութիւնը որոշէ արտերկրի լիբանանցիները Պէյրութ փոխադրելու Դ. փուլին մանրամասնութիւնները:

«Քորոնա» ժաիրի դեմ պայքարի եւ նախագգուշութիւններու ազգային յանձնախումբը երէկ առաւօտեան գումարեց Նիստ մը, նախագահութեամբ՝ Պաշտպանութեան գերագոյն խորհուրդի ընդհանուր քարտուղար հազարապետ-զօրավար Մահմուտ Ամարի եւ ներկայութեամբ



երիտասարդութեան հարցերու ու մարմնակրթութեան նախարար Վարդիէ Օհանեան-Գեորգեանի, առողջապահութեան հարցերու վարչապետի խորհրդատու Փեթրա Խուրիի, ներքին գործոց եւ աշխատանքի նախարարութիւններուն ներկայացուցիչներուն, ինչպէս նաեւ մարզական տարբեր ակումբներու եւ մարզահամալիրներու պատասխանատուներու ու բժիշկներու:

Շաբ.ը՝ էջ 2

ԱՆՆԱ ՅԱԿՈԲԵԱՆ ՀԵՌԱՁԱՅՆԱՅԻՆ ԶՐՈՅՑ ՈՒՆԵՑԱԻ ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՐՄՆԱԿՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՎԱՐԳԻՆԷ ՕՀԱՆԵԱՆ-ԳԷՈՐԳԵԱՆԻ ՀԵՏ

Երիտասարդութեան հարցերու եւ մարմնակրթութեան նախարար Վարդիէ Օհանեան-Գեորգեան շաբաթավերջին հեռաձայնային հաղորդակցութիւն մը ստացաւ Յայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեանի կողմէն՝ Աննա Յակոբեանին:



Զրոյցին ընթացքին Ա. Յակոբեան շնորհակտեց Վ. Օհանեանի նախարարութեան պաշտօնը՝ մաղթելով արդիւնաւետ աշխատանք:

Քննարկուեցաւ նաեւ լիբանանահայութեան իրավիճակը, անոր դիմաց ցցուող դժուարութիւններն ու զանոնք յաղթահարելու կարելիութիւնները: Աննա Յակոբեան յատուկ հետաքրքրութիւն ցուցաբերեց յատուկ խնամքի կարօտ մանուկներու եւ պատանիներու «Չուարթնոց» կեդրոնի աշխատանքներուն եւ աշակերտներուն բարեկեցութեան նկատմամբ՝ նկատի ունենալով, որ նախարար Օհանեան կը վարէ նաեւ «Չուարթնոց» կեդրոնի տնօրէնի պաշտօնը:

Զրոյցը առիթ եղաւ նաեւ մօտիկ ապագային գործակցութեան հաւանական կարելիութիւններ որոնելու:

Նախարար Օհանեան շնորհակալութիւն յայտնեց Աննա Յակոբեանին՝ անոր ցուցաբերած հետաքրքրութեան համար, եւ խնդրեց իր ջերմագին ողջոյնները փոխանցել վարչապետ Նիկոլ Փաշինեանին:

ԻՐԱՆԵԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԳ ԵՒ ՎԵՐՁԻՆ ՔԱՐԻՒՂԱՏԱՐ ՆԱԻՐ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵՅ ՎԵՆԵԶՈՒԵԼԱԿԱՆ ՋՈՒՐԵՐ

Իրանեան հիւգերորդը եւ վերջին քարիւղատար նաւը, աւելի քան երեք շաբաթ նաւարկելէ ետք, երէկ մուտք գործեց Վենեզուելայի ջուրեր: «Ռոյթըրզ» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ վենեզուելական քարիւղի պետական ընկերութիւնը արդէն սկսած է Նոր քարիւղը մատակարարել երկրի շուրջ 1540 կայարաններուն: Քարիւղի արտադրութեան նահանջին պատճառով Վենեզուելան 1 յունիսէն պիտի սկսի բարձրացնել վառելանիւթերու գիները, որոնք մինչեւ հիմա քարիւղ արտադրող երկրին մէջ գրեթէ ձրի էին: «200 կայարաններ կրնան այս արտադրութիւնը ծախել միջազգային գիներով», յայտարարեց Վենեզուելայի նախագահ Նիքոլաս Մատուրօ՝ այդպիսով վերջ դնելով երկրին մէջ վառելանիւթ ծախելու մենաշնորհին: Իրանեան քարիւղատար չորրորդ նաւը՝ «Ֆայս-քըն»-ը, ուրբաթ օր հասած էր Վենեզուելա եւ երկրին յանձնած իր փոխադրած պէնզինը, որուն կարիքը ունի երկիրը՝ քարիւղի մարգին դեմ հաստատուած պատժամիջոցներուն պատճառով »:

ԻՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ. «ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԵՐՔ ԱՋԱԿՑԻԼ ԳԻՄԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՆՅՔԻՆ ԵՒ ՊԱՇՏՊԱՆԵԼ ՊԱՂԵՍՏԻՆՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՈՒ ՀՐԶՊԱԼԼԱՆ»

Իրանի խորհրդարանի նախագահ Մոհամետ Պաքեր Զալիպաֆ յայտնեց. «Նոր խորհրդարանը պարտաւորութիւն կը ստանձնէ շարունակելու նահատակ Զասեմ Սէյմանիի ուղին»՝ դիմադրութեան առանցքին աջակցելու ուղին, որ անփոփոխելի է, եւ որդեգրուեցաւ որոշում մը, որ Նոր խորհրդարանը ըլլայ Զասեմ Սէյմանիի խորհրդարան:

Անշուշտ Նոր խորհրդարանը յանձնառու է անոր դիմադրութեան առանցքին աջակցելու եւ պաղեստինցի ժողովուրդը, լիբանանեան Յըզպալլան, Համաս շարժումի եւ Իսլամական ժիհադի նման պաղեստինեան շարժումներ պաշտպանելու եւ

անիրաւուած եմէնցի ժողովուրդին թեւ ու թիկունք կանգնելու»:

Զալիպաֆ նաեւ յայտնեց. «Իրանի մէջ վատ վարկ ունեցող պետութիւններուն հետ աշխատիլը ռազմավարական սխալ է»:

«Նոր խորհրդարանը մտադիր չէ իրանեան կառավարութեան հետ դիմակայելու, սակայն խիստ կերպով պիտի հետապնդէ ժողովուրդի իրաւունքներն ու շահերը, ինչպէս նաեւ պիտի աշխատի ժողովուրդի ծառայութեան ճամբուն վրայ կառավարութեան առջեւ ծառացած իրաւաբանական արգելքները վերցնելու ի խնդիր», նշեց Իրանի խորհրդարանի նախագահը:

ՃՈՐԸ ՖԼՈՅՏԻ ՄԱՀԷՆ ԵՏՔ ՅԱՌԱՋԱՅԱԾ ՅՈՅՑԵՐԸ ՀԱԿԱԿՈՒԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿՐԱԿՄԱՐ՝ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԱՐԳ ՄԸ ՔԱՂԱՔՆԵՐՈՒ ՄԷՁ



Միւնխափոլիս քաղաքին մէջ ոստիկանի կոպիտ վարմունքին պատճառով 46-ամեայ սեւամորթ ճորը Ֆլոյտի մահէն ետք յառաջացած զանգուածային բողոքի ցոյցերու եւ անկարգութիւններու իբրեւ հետեւանք Միացեալ Նահանգներու կարգ մը քաղաքներու մէջ կրակմար յայտարարուեցաւ:

Շաբ.ը՝ էջ 4

ՀՅԴ ԼԻԲԱՆԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԸ ՅԱՐԳԵՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԿԵՐՏԻՉՆԵՐՈՒՆ ՅԻՇԱՍԱԿԸ



Կիրակի, 31 մայիս 2020-ին, Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 102-ամեակին առիթով Հայ յեղափոխական դաշնակցութեան Լիբանանի ընտանիքը յարգեց անկախութեան կերտիչներուն յիշատակը:

Առաջին առիթով ծաղկեպսակ գետեղեցաւ Ֆորն Շըպէի Ազգային գերեզմանատան մէջ, ուր հանգչած են նուիրեալներն մաս մը: Այս Պուրը Համուտի գերեզմանատան մէջ՝ ՀՅԴ պալաթնիսին դիմաց, տեղի ունեցաւ յատուկ հանդիսութիւն մը, որուն ներկայ գտնուեցան Լիբանանի թեմի կաթողիկոսական փոխանորդ Շահէ եպս. Փանոսեան եւ Լիբանանի թեմի կղերական դասէն ներկայացուցիչներ, Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Վահագն Աթաբեկեան եւ դեսպանատան անձնակազմը, ՀՅԴ Բիւրոյի ներկայ եւ նախկին անդամները, ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի կազմը, կոմիտէներու հերթապահները, ԼԵՄ-ի Կեդրոնական վարչութեան, Պատանեկան ԸՎՄ-ի եւ ՉՈՄ-ի ներկայացուցիչներ, Լիբանանի թեմի ազգային իշխանութեանց ներկայացուցիչներ, ուղեկից միու-



թիւներու ՝ Համազգայինի, ՀՄԸՄ-ի եւ ԼՕԽ-ի ներկայացուցիչներ, կուսակցական նախկին երեսփոխաններ, Պուրը Համուտի քաղաքապետը, «Ազդակ» օրաթերթի եւ «Վանայ ծայն»-ի տնօրէնները:

Շաբ.ը՝ էջ 4

ԱՐՑԱԽԻ ՄԷՁ ՀԱՅՈՅ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ 102-ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ



ՀՅԴ Արցախի Կեդրոնական կոմիտէին նախաձեռնութեամբ, հայոց պետականութեան վերականգնման տօնին առթիւ Արցախի մէջ կազմակերպուեցաւ նախաձեռնութիւն մը: ՀՅԴ Արցախի Կեդրոնական կոմիտէի, ՀՅԴ տարբեր մարմիններու անդամներ, երիտասարդներ Ստեփանակերտի «Նիկոլ Դուման» կեդրոնէն երթով ուղղուեցան դէպի Բեկորի յուշակոթող, ուր կայացաւ երդման արարողութիւն, եւ ՀՅԴ Արցախի երիտասարդական միութեան եւ ՀՅ Դաշնակցութեան Արցախի կառոյցի շարքերը համալըրեցան Նորագիրներով:

Այնուհետեւ տօնական օրը շարունակուեցաւ խարոյկի շուրջ՝ նշելով մայիսեան յաղթանակները, հայոց պետականութեան վերականգնումը:

ՀՅԴ Արցախի ԿԿ անդամ Մերգէյ Շահվերդեան, շնորհաւորելով շարքերը անցած երիտասարդները, նշեց, որ Դաշնակցութիւնը միատեսակ, միակերպ մտածելակերպով կը համախմբէ աշխարհով մէկ սփռուած հայերը: «Կան բազմաթիւ, բազմաձայնակ երիտասարդական միութիւններ, բայց դուք բազմաթիւ էք, որովհետեւ դուք կը միաւորուիք սրբազան գաղափարի շուրջ եւ կը սկսիք մաս կազմել համահայկական կազմակերպութեան», յայտնեց Ս. Շահվերդեան:

ՀՅԴ շարքերը անցած Նորագիրներուն կնքահայրը ազատամարտիկ Զրաբ Թադեւոսեանն էր: Ան, ներկաները շնորհաւորելով Մայիս 28-ի ազգային-պետական կարեւորագոյն տօնին առիթով, վստահութիւն յայտնեց, որ՝ որպէս նախորդներու շարունակութիւն, Նոր սերունդն ալ իր նպատը պիտի բերէ պետութեան կայացման, ամրացման ու հզօրացման գործին:

Շաբ.ը՝ էջ 2

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆԻ ԵՒ ԱՐԱՅԻԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՁ



Մայիսի 28-ին Երեւանի մէջ տեղի ունեցաւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեանի հանդիպումը:

Ն. Փաշինեան դիտել տուաւ, թէ ընտրութիւններէն ետք ստեղծուած են բոլոր նախարարեալները, որ Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի Հանրապետութեան կառավարութեանը իշխանութիւնը ռազմավարական եւ երկրաբաժանվել մարտահրաւերները, կառավարել այդ մարտահրաւերները, եւ մեր հայրենիքը առաջնորդել ռազմավարական, երկարատեւ եւ կայուն զարգացման ճամբով», յայտնեց վարչապետ Փաշինեան:

Իր հերթին, Արայիկ Յարութիւնեան նշեց, որ համարկման խորացումը իրեն համար պիտի ըլլայ գլխաւոր թեմաներէն մէկը՝ դիտել տալով, որ այս ծիրին մէջ ալ արդէն կը մտածուի համապատասխան կոմիտէի ստեղծման մասին:

Անվտանգութեան առումով, ըստ Նորընտիր նախագահին, կայ կարելու համագործակցութիւն պաշտպանութեան բանակին մէջ, բայց երկու երկրները ունին նաեւ խնդիրներ՝ անվտանգութեան վերաբերող մնացեալ ուղղութիւններով, ուր համատեղ աշխատանքը են կարելու է:

Շաբ.ը՝ էջ 2

ՎԱՐՉԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՄԵՋ

«ԼՈՒՄԱՅԱՓՈԽՆԵՐԸ
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՕՐ ՊԻՏԻ
ՎԵՐՍԿՍԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ»

ՇԵՇՏԵՑ ՄԱՅՄՈՒՏ ԴԱԼՈՒԻ

Վարչապետ Ֆասսան Տիապ շաբաթավերջին վարչապետարանին մեջ ընդունեց լուսնայափոխներու պատուիրակութիւն մը, ներկայութեամբ Ելեւմուտքի նախարար Ղազի Ուազնիի, Ներքին գործոց եւ քաղաքապետութեանց հարցերու նախարար Սոհամետ Ֆահմիի, Կենսոլորտի եւ վարչական բարեկարգումի նախարար Տըմիանու Զաթթարի, ինչպէս նաեւ Կեդրոնական դրամատան կառավարիչ Ռիատ Սալամի:



Հանդիպումէն ետք լուսնայափոխներուն անունով խօսք առաւ Մահմուտ Հալաուի, որ յայտնեց, թէ լուսնայափոխներու սենտիքայի իբրեւ ներկայացուցիչներ հանդիպում ունեցած են վարչապետին հետ՝ շեշտելով, որ հանդիպումը եղած է արդիւնաւետ, որովհետեւ պատասխանատուները ընդառաջած են իրենց առաջարկներուն, ինչպէս նաեւ կարելորած լուսնայափոխներուն դերակատարութիւնը ազգային տնտեսութեան մէջ:

Հալաուի յայտնեց, որ իրենք քննարկած են նաեւ յառաջիկայ փուլին երկրին տնտեսական բնագաւառին մէջ տեղծուելիք կացութեան վերաբերող մանրամասնութիւններ:

Ան ընդգծեց, որ դատական իշխանութիւնները կատարելալ իրաւունք ունին միջամտելու լուսնայափոխներուն աշխատանքային մարզին՝ շնորհակալութիւն յայտնելով, որ դատական իշխանութիւնները ատիկա ըրին: Ան հաստատեց, որ կան լուսնայափոխներ, որոնք կ'ուզեն իրենց աշխատանքը թափանցիկութեամբ շարունակել՝ հիմնուելով բոլոր օրէնքներուն եւ շրջաբերականներուն վրայ: «Թափանցիկութեամբ գործող լուսնայափոխներուն նպատակն է մաքրագործել լուսնայափոխներու մարզը, եւ վերջ տալ բացթողումներուն ու անոր վարկը մրոտողներուն», ըսաւ Հալաուի:

Ան շեշտեց, որ իրենք կը հաւատան երկրին տնտեսական կացութիւնը փրկելու կառավարութեան կարողութիւններուն՝ աւելցնելով, որ լուսնայափոխները վերջ պիտի տան իրենց գործադուլին եւ աշխատանքի վերադառնան չորեքշաբթի, 3 յունիս 2020-ին:

ԱՐՅԱՆԻ ՄԵՋ ՀԱՅՈՑ . . .

Շարունակում Ա. Էշէն

Հրաչ Թադէոսեան խորհրդանշական համարեց երդման արարողութեան վայրը, քանի որ Աշոտ Բեկորի նման հայրենիքի պառկներ պարգեւած մարդիկ անպարտելի են: «1918-ի պետականակերտման գործի շարունակութիւնը եղաւ Արցախեան շարժումը եւ անկախութեան հռչակումը: Եւ թէպէտ շատ թանկ գնով, բայց այդ յաջողութիւնը ամրապնդեցաւ: Նաեւ Արցախի հիմնաւորը եւ սրբազան տարածքին մէջ: Մեր Նոր սերունդի ներկայացուցիչները՝ երիտասարդները, պետք է աւելի ուշադիր ըլլան եւ ներկայ լրահոսի, գանազան թիրխմացութիւններու այս տեղապտույտի մէջ կարողանան ճշմարիտ արժեքները գնահատել եւ ընթանալ իրենց սրտի թելարդած ուղիով», Նշեց Հրաչ Թադէոսեան:

Ըստ անոր՝ պետականութեան ակունքներուն մէջ կանգնած քաղաքական կազմակերպութեան անդամակցելով՝ Նորագիտները կարելիութիւն պիտի ունենան ՀՀ-ի փորձառութիւնը, կարելիութիւնները ուղղել երկրի շէնացման, գարգացման, Հայաստանի եւ Արցախի հզօրացման: Երդման արարողութենէն ետք խօսք առաւ ՀՀ-ի Արցախի ԿԿ-ի ներկայացուցիչ Դաւիթ Իշխանեան, որ Նշեց, թէ դաշնակցական ըլլալը բաւական ծանր ու պատասխանատու առաքելութիւն է: Ան անդադարձաւ օրուան խորհուրդին՝ կարելոր նկատելով դարաւոր պայքարէ ետք հայոց պետականութեան վերականգնումը:

«Մայիս 28-ին վերականգնեցաւ դարերով կորսուած պետականութիւնը, որ երբ անկերու, նպատակներու մարմնացումն է: Այս օրերուն աշխարհիկ տարբեր յարերու մէջ, ուր կայ հայութիւն եւ քնականաբար՝ Դաշնակցութիւն, կը տօնուի Մայիս 28: Բայց ուր այլ տօնուի, բոլորին ուշադրանքով անկեղծօրէն կ'ուղղուի դէպի Արցախ ոչ թէ այն առումով, որ այստեղ կը ձեւաւորուի Նոր իշխանութիւն, այլ այն առումով, թէ ինչ ուղղութեամբ կը շարժի Արցախը: Մեզմէ իւրաքանչիւրը պետք է գիտակցի իր առաքելութեան, մեզմէ իւրաքանչիւրը ունի այդ պարտականութիւնը», Նշեց Դ. Իշխանեանը՝ վստահութիւն յայտնելով, որ ոչ միայն Նորագիտները, այլ նաեւ տասնամեակներ շարունակ ծանր պատասխանատուութիւն կրող դաշնակցական ընկերները, համալիրները, ՀՕՄ-ականները առիթներ ունեցած են եւ դեռ պիտի ունենան պատուով իրականացնելու այդ առաքելութիւնը:

ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆԵԱՆԻ . . .

Շարունակում Ա. Էշէն

Ան հիմնական նկատեց նաեւ գործակցութիւնը տնտեսական բնագաւառին մէջ: «Կ'ակնկալեմ ամփոփական ձեռքակցութիւնը պահպանելու Նոյն կշռոյթը, ինչպէս վերջին տարիներուն եղած է ձեռն ղեկավարման ընթացքին, որպէսզի յառաջիկային տեսնենք Արցախի շէնացման, գարգացման աւելի ցայտուն օրինակներ: Ինծի համար տեսանելի է Արցախը օր առաջ փոխելու, գարգացնելու եւ որպէս հայութեան կարեւոր բնօրրան ներկայանալու հնարաւորութիւնը», յայտնեց Ա. Յարութիւնեան:

«ՈԱՇԻՏ ՔԱՐԱՄԷԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԳՈՐԾՈՒՆԵՑԱԻ
ԼԻԲԱՆՆԻ ՄԻԱՄԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԹԻՐԱՆՈ ԴԱՐՉՆՈՂ
ԾՐԱԳԻՐԻ ՇՐՋԱԳԻԾԻՆ ՄԵՋ»

ՇԵՇՏԵՑ ՖԱՅՍԱԼ ԶԱՐԱՄԷ

Արժանապատուութիւն հոսանքի ղեկավար, Երեսփոխան Ֆայսալ Զարամէ երկ Թրիփուլիի իր գրասենեակին մէջ արտասանեց խօսք մը՝ Նուիրում իր հօրերը, Նախկին վարչապետ Ռաշիտ Զարամէի նահատակութեան 33-ամեակին:

Ան հաստատեց, որ Ռաշիտ Զարամէ ապրած է եւ նահատակուած՝ ի խնդիր Լիբանանին:

«Չարմանալի այն է, որ այսօր լիբանանցիները վերադարձած են դաշնակցային պետութեան յանկերգին, առանց ըմբռնելու այն իրողութիւնը, թէ անկիկ անվերադարձ մեկնած է: Մեկ պետութեան փոխարէն դաշնակցային պետութեան մասին խօսող լիբանանցիները տակաւին չեն հասկըցած, որ մեկ պետութեան այլընտրանքը Լիբանանի վերացումն է՝ իբրեւ պետութիւն եւ գոյացութիւն: Այս պատճառով ստիպուած կը զգամ մեքերելու 1985-ին

Ռաշիտ Զարամէի արտասանած հետեւեալ խօսքը. «Անոնք դժբախտաբար իրենց գրաւը կը դնեն Միացեալ Նահանգներուն կամ սատանային վրայ: Կարելի չէ դաշնակցային պետութեան վերածել Լիբանանը, այլ պետք է զայն պահել մէկ երկիր՝ առաք, ազատ, անկախ եւ գերիշխան», ըսաւ ան:

Ֆայսալ Զարամէ յայտնեց նաեւ, որ կարելի չէ Թաէֆի համաձայնագիրը ջնջել՝ աւելցնելով, թէ աւելի ճիշդ է Թաէֆը գործադրել՝ զայն նկատելով քաղաքական կեանքին, ժողովրդավարութեան եւ Ազգային ուխտի գործադրութեան միակ աղբիւրը, որ կը միացնէ լիբանանցիները եւ անոնց առիթ կու տայ փոխադրուելու դէպի արդի պետութիւն, որ կը գոհացնէ միտքը, խիղճը, տրամաբանութիւնն ու Նորահաս սերունդները:

Ֆայսալ Զարամէ շեշտեց, որ իրենք պիտի չարտօնեն, որ Ռաշիտ Զարամէ եւ հայրենիքի բոլոր նահատակները դարձեալ սպաննուին:

ԼԻԲԱՆՆԻ ՄԵՋ «ՔՈՐՈՒՆԱ» ԺԱՂՈՎ . . .

Շարունակում Ա. Էշէն

Նիստէն ետք նախարար Օհանեան-Գեորգիան հաստատեց, թէ Նիստին ընթացքին ներկայացուցեալ ընդհանուր գորաշարժի ընթացքին մարգական բնագաւառին կացութիւնը՝ աւելցնելով, որ քննարկուած են այն չափանիշները, որոնք պետք է որդեգրուին՝ վերաբանալու համար մարգական կեանքը՝ ակունքները, մարգահամալիրներն ու դաշտերը:

Նախարար Օհանեան-Գեորգեան շեշտեց, որ որդեգրուելիք չափանիշներու միացեալ գործիքակազմը պիտի գործադրուի ամբողջ Լիբանանի տարածքին, ինչպէս նաեւ այդ մարզին մէջ գործողներուն համար պիտի կազմակերպուին փորձաշխատական յատուկ աշխատանքներ, որպէսզի կարելի ըլլայ գործիքակազմը ճշգրիտ կերպով գործադրել, եւ այդ աշխատանքին գործադրութենէն շաբաթ մը ետք կարելի ըլլայ մարգական ոլորտը մը վերաբանալ:

Նախարար Օհանեան-Գեորգեան յայտնեց, որ այդ գործիքակազմին գործադրութիւնը պիտի կատարեն Ներքին գործոց եւ քաղաքապետութեանց հարցերու, երիտասարդութեան եւ մարմնակրթութեան, առողջապահութեան եւ աշխատանքի նախարարութիւնները:

Առողջապահութեան նախարարութեան տեղեկութիւններուն համաձայն, երկ Լիբանանի մէջ «Քորոնա» ժահրով վարակածներուն թիւը հասաւ 1220-ի՝ վերջին 24 ժամուան ընթացքին արձանագրելով 29 Նոր վարակուածներ:

Նախարարութիւնը յայտնեց, թէ ցարդ «Քորոնա» ժահրով 27 վարակուած պարագաներ մահացած են, իսկ 712 ուրիշներ՝ բուժուած:

Նախարարութեան համաձայն, Նախորդ 24 ժամուան ընթացքին տեղացիներուն շարքին արձանագրուած են 2 վարակուածներ, իսկ արտերկրի լիբանանցիներուն մէջ՝ 27:

Առողջապահութեան նախարար Համատ Հասան երկ, ընկերակցութեամբ ծառարարուեստի նախարար Իմատ Հուպալլայի, այցելեց Հերմելի կառավարական հիւանդանոց, որուն տնօրէնին յանձնեց շէնացական յատուկ երկու սարքեր՝ Նուիրում իրանեան պետութեան կողմէ:

Այցելութենէն ետք Հասան շնորհակալութիւն յայտնեց Լիբանանին բժշկական օժանդակութիւն հայթայթած բոլոր պետութիւններուն՝ Զաթարի, Զուէյթի եւ Իրանի:

Հասան ներկայ գտնուեցաւ Նապի Շիթ գիւղաքաղաքին մէջ «Ալուա լա վի ժեմ լօ» ըմպելի ջուրի ընկերութեան բացման արարողութեան՝ հաստատելով, որ այս ջուրին երաշխիքներով առողջապահութիւնը կը հզօրացնենք, եւ բոլորս միասին կը գործենք՝ ի խնդիր մարդ արարածին շաւերուն եւ անոր առողջութեան:

«Մարտահրաւերներու դիմակայման կառավարութեան հիմքերուն վրայ միասնաբար կը գործենք՝ տնտեսական աշխուժ ապագայի մը կերտման ի խնդիր», ըսաւ ան:

Նկատի ունենալով ներքին գործոց նախարարութեան հրապարակած վերոնշեալ շրջաբերականին մանրամասնութիւնները, որոնք շրջագիծին մէջ դիմակներ կրելը կը մնայ պարտադիր, ընկերային հեռաւորութիւնները պահելն ու համախմբումներէ հեռու մնալը՝ անհրաժեշտ նախագգուշութիւններ:

Անոնցմէ անկախ, այսօրուընէ սկսեալ կրակարի դրութիւնը կը սկսի կէս գիշերին եւ կ'աւարտի առաւօտեան ժամը 5:00-ին: Ինքնաշարժներու եւ մոթոքսիքլներու

երթելակութեան պարագային ինքնաշարժի գոյգ եւ անգոյգ թիւերու դրութիւնը պիտի պահուի. այս օրէնքէն զերծ պիտի կացուցին հանրային փոխադրութեան յատուկ ինքնաշարժներու երթելները:

Այսօր պիտի վերաբացուին նաեւ հսկայ հանրահանութիւնները (մութեր), բացառութեամբ՝ շարժապատկերի սրահներուն եւ երեխաներու յատուկ խաղավայրերուն:

Բոլոր ճաշարանները, սրճարաններն ու ճաշ առաքողները կրնան աշխատիլ մինչեւ կէս գիշեր:

Զազիս տիւ Լիպանը, թանգարանները եւ հսկայ վաճառատները պիտի վերաբանան իրենց դռները:

Լոգաւագանները եւ լողափները պիտի վերսկսին աշխատանքի, պայմանով որ անոնք կատարեն հարկ եղած բոլոր քննութիւններն ու օգտագործեն քլոր, իսկ իրենց կատարած քննութիւններուն պաշտօնական արդիւնքները ցուցադրեն լոգաւագանին կամ լողափին մուտքին:

Բանջարեղէնի, հաւերէնի, մսեղէնի եւ ձկնեղէնի շուկաները, փուռերը, այլադասերը, լուսնայափոխները, դրամատուները, պահակութեան ընկերութիւնները, պանդոկները, հեռաձայնային եւ ջուրի ընկերութիւնները, քիչային հեռաձայնի ընկերութիւնները, պէնզինի կայարանները, ինչպէս նաեւ դեղորայքի յատուկ գործարանները շուրջօրեայ դրութեամբ կրնան գործել:

Մանկամուրները, մարգական ակունքները, գիշերային ակունքներն ու գիւնետուները, հանրային պարտէզներն ու խաղավայրերը, թատերասրահներն ու շարժապատկերի սրահները, ինչպէս նաեւ տարբեր առիթներ հիւրընկալող դաշիններն ու համացանցի խաղի սրահները կը շարունակեն մնալ փակ:

ՅՈՒՅԱՐԱՐՆԵՐ ՆՍԱՏՅՈՑՅԵՐ
ԿԵՏԵՐԵՑԻՆ ՆԱԽԱԿԱՆԿԱՆ
ՊԵՏԻՆԻ ԶԱՐԱՐՈՒՄԸ
ԵՒ ԽՈՐՀԱՐԱՐՆԵՐՆԻ ԿԵՏԵՐԵՑԻՆ

Երկ երեկոյեան ժամը 7:00-ին ընկերային շարժումի մասնակից ցուցարարներ ուղղուեցան Նախագահական պալատ, ուր անոնք բողոքեցին տիրող կացութեան դէմ: Նախագահական պալատի ճամբուն վրայ ցուցարարներուն եւ բանակին միջեւ արձանագրուեցան բախումներ:

Ապա ցուցարարները ուղղուեցան Կեդրոնական Պէլլուրը եւ բողոքի նստացոյց մը կատարեցին՝ պաշտպանութեան նախարար Չէյնա Սքըրի բնակարանին դիմաց՝ պահանջելով ազատ արձակել Հասան անունով ցուցարար մը, որ ցոյցի ընթացքին ձերբակալուած էր:

Խորհրդարանի մուտքին ցուցարարներուն եւ խորհրդարանի ապահովութեան հսկող յատուկ ուժերուն միջեւ արձանագրուեցան բախումներ եւ լուռեցաւ կրակոյց:

Ցուցարարները սպաննացին այսօր կէսօրէ առաջ ժամը 11:00-ին, Չիւնուրական ատենակին դիմաց բողոքի նստացոյց կատարել՝ իրենց գործակից ցուցարարը ազատ չարձակելու պարագային:

Կէս գիշերին խորհրդարանի մուտքին ու Նահատակաց հրապարակին վրայ խաղաղութիւնը վերահաստատուեցաւ:

Նշենք, որ Թրիփուլիի Նուր հրապարակին վրայ ցուցարարներ քանդեցին «Ապտել Համիտ Զարամէի հրապարակ» անունը կրող ցուցանակը:

Ցուցարարներ կէս գիշերին փակեցին Սաատնայէի մայրուղին, Մարժի մայրուղին, Աքքարի Պըպին հրապարակը:

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ
ԳԵՄՊԱՆԸ ԱՅՑԵԼԵՑ
ԺՈՄՊԼԱԹԻ ԵՒ ԺԵՄԱՅԵԼԻ



Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Տոքթըր Շիա շաբաթ երեկոյեան այցելեց Մուխթարայի պալատ, ուր հանդիպում ունեցաւ Ընկերվար յառաջդիմական կուսակցութեան ղեկավար Ուալիտ Ժոմպլաթի հետ, ներկայութեամբ Ժոմպլաթի կնոջ՝ Նուրա Ժոմպլաթի եւ դստեր՝ Տալիա Ժոմպլաթի:

Հանդիպումին ընթացքին քննարկուեցան տեղական եւ շրջանային քաղաքական իրադարձութիւնները:

Շիա դարձաւ Ժոմպլաթի ընթրիքի հիւրը: Երկ երեկոյեան Շիա հարցազրոյցի մը ընթացքին յայտնեց, որ ամերիկեան Նոր պատժամիջոցները թիրախ կը դարձնեն Հրգպալլան, «սակայն անոնք կրնան նաեւ ընդգրկել Հրգպալլայի զօրակցող որոշ կողմեր», աւելցուց ան:

Շիա դիտել տուաւ, որ ամերիկեան Նոր պատժամիջոցները գործադրութեան պիտի դրուին այսօրուընէ սկսեալ: Միւս կողմէ, Շիա այցելեց նաեւ Փաղանգատը կուսակցութեան Սայֆի կեդրոն, ուր հանդիպում ունեցաւ Փաղանգատը կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Սամի Ժեմայէի հետ:

Հանդիպումին ընթացքին քննարկուեցան լիբանանեան իրադարձութիւնները, որոնք շրջագիծին մէջ Լիբանանի ու յատկապէս լիբանանեան բանակին տրամադրուած ամերիկեան օժանդակութիւնները:

Արծարծուեցան նաեւ Լիբանանի եւ Միջազգային դրամական ֆոնտի միջեւ կատարուած բանակցութիւնները, շեշտուեցաւ անոնց անմիջապէս սկսելու կարեւորութիւնը՝ նկատի ունենալով Լիբանանի կարիքները՝ տնտեսական եւ ելեւմտական իր տագնապներէն դուրս գալու համար:

Ժեմայէ եւ Շիա հաստատեցին թիւ 1559 եւ թիւ 1701 միջազգային բանաձեւերը գործադրելու իմաստով Լիբանանի յանձնառութեան անհրաժեշտութիւնը:

Նշենք, որ Ժեմայէ երկ ընկերային ցանցերու վրայ տեղադրուած գրառումի մը ընդմէջէն հաստատեց, որ Փաղանգատը կուսակցութիւնը պիտի մնայ յեղափոխութեան սրտին մէջ եւ պիտի չբերի աւելի լաւ ապագայ ունեցող Լիբանան մը կերտելու իր նպատակը:

ԼԻԲԱՆՆԵԱՆ
ԿԱՐԳ ԼՈՒՐԵՐ

●ՄԱՐՈՒՆԻ համայնքի Պշարա Ռայի պատրիարքը երկ Պերքեի մէջ նախագահեց կրակի օրուան Ս. պատարապին, որուն ընթացքին արտասանած իր քարոզին մէջ շեշտեց, որ մերժելի է վարչապարզի այն բարեկարգումը, որ կը վերացնէ Լիբանանը: «Լիբանանը՝ իբրեւ արժեք, տակաւին միջազգային հետաքրքրութեան կեդրոն է, հետեւեալը ան առանձին ու լրեւած է», ընդգծեց Ռայի պատրիարքը: Ան հաստատեց, որ լիբանանցի քաղաքական պատասխանատուները իրաւունք չունին կատարեալ պատասխանատուութեամբ չգործելու:

●ԱԶԱՅԻՆ ազատ հոսանք կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Ժըպրան Պասիլ ընդունեց Լիբանանի Բրիտանիոյ դեսպան Քրիս Ռամփլինը, որուն հետ քննարկեց լիբանանեան իրադարձութիւններն ու Բրիտանիոյ կողմէ Լիբանանի տրամադրուելիք օժանդակութեան կարելիութիւնները: Պասիլի այցելեց նաեւ Դրամատուներու միութեան մէկ պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ՝ միութեան նախագահ Սելիմ Սֆէյրի: Քննարկուեցան երկրին ելեւմտական տագնապի լուծման վերաբերեալ միութեան ունեցած մօտեցումներն ու պատկերացումը:

●ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ուժեր կուսակցութեան ղեկավար Սամիր Ժահիան յայտնեց, որ Միջազգային դրամական ֆոնտէն նիւթական օժանդակութիւն տառապալու Լիբանանի յոյսերը շատ ճղճիմ են:

●ԱԶԱՅԱԳՐՈՒՄ եւ բարգաւաճում պղոքի երեսփոխան Զաւսմ Հաշմ ընկերային ցանցերուն ընդմէջէն կատարած իր գրառումով Նշեց, որ միշտ լիբանանցիներն են, որոնք սուր կը վճարեն համայնքային եւ յարանուանական շահերուն գինը:

ԿՈՂՔԻՂ ԵՄ, ԼԻԲԱՆԱՆ



Ճգնաժամը համաշխարհային է:
Բայց Լիբանանի ճգնաժամը դժոխակ է:
Տաժանելի է:
Դժոխային է:
Հոն միայն «Քորոնա» ժահիրի համաճարակի սարսափը չէ, որ ճգնաժամի մատնած է լիբանանցին:
Հոն լիբանանցիին տարիներու վաստակը մէկ օրուան մէջ կլանուեցաւ դրամատուներուն[?] կողմէ:
Հոն լիբանանցին հացի կարօտ է, բառին ամենադաժան իմաստով:
Հոն լիբանանցին կ'ապրի մարդու տարրական իրաւունքներու ոտնակոխման պայմաններու մէջ:
Հոն լիբանանցին երանի կու տայ պատերազմի օրերուն:
Լիբանանի ճգնաժամը նոր չէ, սակայն անոր ակնաշնչաւոր չէինք կամ չէինք ուզեր ըլլալ, որովհետեւ լիբանանցին կը տոկար:
Աւելի'ն ան ձեռք կ'երկարեր սուրիահայ իր քոյրերուն եւ եղբայրներուն, երբ անոնք պատերազմի արհաւիրքէն հասած էին Լիբանան:
Ճգնաժամը կը արեր: Լիբանանահայը կը հիւժեր:
Տակաւին կը հանգանակէր Հայաստանի եւ Արցախի համար:
Ճգնաժամը կը հասներ ոսկորին: Լիբանանահայը կ'արիւնէր:

Բայց աշխարհին ցոյց կու տար ինչպէս մայիս 28 կը տօնակատարեն, այդ ալ՝ առցանց: Կը իյշէր, կ'արժէտորէր, յարգանք կը մատուցէր:

Լիբանանահայ գաղութը ամենէն տազնապալի օրերուն Եռագոյնը բարձր պահած էր: Ինչպէ՛ս «Քորոնա» ժահիրին ստեղծած պայմանները արգելք պիտի հանդիսանային փառահեղօրէն նշելու հայոց պատմութեան Մեծ տօնը: «Երբ չի մնում ելք ու ճար, խնայէրն են գտնում հնարք»։ Եւ արդէս առցանց տօնակատարութիւնը դասական ձեռնարկէ մը աւելի ազդեցիկ եւ բովանդակալից եղաւ:

Փառք ու պատիւ ձեզի լիբանանահայութի՛ն, որ տնտեսական անասելի պայմաններու եւ անմարդկային կացութեան մէջ Մայիսեան փառահեղ յաղթանակը եւ Հայաստանի անկախութեան 102-րդ տարեդարձը այսպէս շքեղ, օրինակելի եւ նախանձելի ձեւով կրցաւ տօնակատարել:

Եւ կարծեք այդ եղաւ խթանը: Մայիս 28-ին, խորհրդանշականօրէն մեկնարկը տրուեցաւ Քանաւայի կազմակերպած հանգանակային արշաւին: Քանաւայի կազմակերպիչը միշտ ամբողջական օժանդակութիւն տրամադրած է հոն՝ ուրկէ հնչած է օգնութեան կանչը, ըլլայ ան հայրենիքէն կամ սփիւռքի որեւէ գաղութ:

Թող այս անգամ մեր սրտերը բաբախեն Լիբանանի համար, որուն հետ, օրին մէկը, առնչուած եղած ենք գրեթէ բոլորս, խմած ենք անոր ջուրը, սորված ենք անոր փորձառութիւններէն:

Լիբանանին համար, որ պատրաստած է ղեկավարներ, որոնք աշխարհացրիւ հայութեան տարբեր գաղութներու ղեկավարներ են այսօր:

Լիբանանին համար, որ տակաւին կը պահպանէ հայութիւնը շնորհիւ իր կրթական, մշակութային եւ բարեսիրական կառոյցներուն, որոնց գոյութիւնը յետ այսու հարցական է:

Լիբանանին համար, որպէսզի «Ազդակ»-ն ու «Վանայ Ձայն»-ը շարունակեն մտել մեր տուները, ամենուրեք:

Հասնի՛նք լիբանանահայութեան: Տա՛նք մեր լումները լիբանանահայութեան համար՝ օրինակ առնելով Սուրիոյ հայութեան մեր օժանդակութեան փորձառութենէն: Ուղարկենք կեդրոնական մեր կառոյցին (https://acc.akaraisin.com/Donation/Event/DonationInfo.aspx?seid=22523&mid=48), ան լաւ գիտէ ինչպէս յատկացնել, ուր որ անկ է:

Իսկ ես... ովկիանոսին միւս կողմն եմ, բաղդատաբար՝ բնական կեանք մը ապրելու աւելի լաւ պայմաններու մէջ: Բայց կողքի՛դ եմ, Լիբանան, մինչեւ վերջին շունչս:

Կողքի՛դ եմ, որովհետեւ կարօտդ զիս կ'այրէ:
Կողքի՛դ եմ, որովհետեւ հայկական կառոյցներուդ իւրաքանչիւրին պատկերը կը տողանցէ մտապատառիս վրայ ամէն օր:

Կողքի՛դ եմ, որովհետեւ դուն Հայաստանը սերմանեցիր մէջս ու զայն ապրեցուցիր:

Կողքի՛դ եմ, որովհետեւ իմ առաջին Հայաստանս դո՛ւն եղար:

Արամի՛ն Հայաստանը:

ԽԱՏԱԿ ԳՈՐԱՃԵԱՆ

ՀՄԵՄ-ԱԿԱՆ ԿԱՐՕ ԳԱԶԱՆՃԵԱՆ ՈՉ ԵՄ Է

Նախորդ շաբաթ Միացեալ Նահանգներու մէջ մահացաւ Կարօ Գազանճեանը (Ըստեղ):
Ան եղած է ՀՄԸՄ-ի Լիբանանի գործունեայ եւ վաստակաւոր եղբայրներէն՝ ըլլալով մարզիչ, իրաւաբար, մարզանքի ուսուցիչ, նաեւ մեծ ներդրում ունեցած է ՀՄԸՄ-ի միջոյարոցական ԼԵՎԱՄ-ի մրցաշարքերու ծիրին մէջ:
Մեր խորին ցաւակցութիւնները եղբօր ընտանիքին եւ հարազատներուն:

ՀՄԸՄ-Ի ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՐԹԵՐՆ

ՀՅԴ «Ն. ԱՂԲԱԼԵԱՆ» ԿՈՄԻՏԷ

ՀԱՅԱՍՏԱՆԻ Ա. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈՉԱԿՄԱՆ ԱՌՑԱՆՑ ՁԵՌՆԱՐԿ



Կազմակերպութեամբ ՀՅԴ «Ն. Աղբալեան» կոմիտէին, երէկ, կիրակի, 31 մայիս 2020-ի առաւօտեան ժամը 10:00-ին Մրգ-հերի «Մայիս 28» պողոտային վրայ տեղի ունեցաւ Հայաստանի Ա. Հանրապետութեան հռչակման առցանց ձեռնարկ:
Ձեռնարկին բացումը կատարեց Հուրի-Փափագեան-Եմմիեան, որ ողջունելէ ետք

Օրուան բանախօսն էր Վաչէ Ծատուրեան, որ խօսքը սկսաւ մէջբերելով Հայաստանի Հանրապետութեան կերտիչներէն՝ Արամ Մանուկեանի «Երեւանը չենք դատարկի» վճռական կեցուածքը՝ թրքական գրոհին դէմ: Այս պատմական յետադարձ անկարկով Ծատուրեան հանգամանօրէն ներկայացուց այն դառն պայմաններն ու



Ներկաները բեմ հրակիրէց Լիբանանի թեմի կաթողիկոսական փոխանորդ Շահէ եպս. Փանոսեանը, որուն կատարած տեղումական աղօթքէն եւ օրհնութեան խօսքէն ետք ՀՄԸՄ-ի սկաւառներ կատարեցին դրօշակի արարողութիւն, իսկ ՀՄԸՄ-ի փողերախումբը նուագեց Լիբանանի եւ Հայաստանի թաղերգները: Ապա, յանուն ՀՅԴ «Ն.Աղբալեան» կոմիտէութեան ՀՄԸՄ Անթիլիասի մասնաճիւղին, ԼՕԽ-ի «Նայիրի» մասնաճիւղին, Համազգայինի «Աղբալեան» մասնաճիւղին եւ ԼԵՄ-ի Հայաստան մասնաճիւղին «Մայիս 28» յուշակոթողին առջեւ ծաղկեպսակներ գետեղուեցան:

մարտահրաւերները, որոնց դիմակալումով հայութիւնը Հայոց ցեղասպանութենէն միայն երեք տարի ետք յաջողեցաւ կերտել Հայաստանի անկախութիւնը: Բանախօսը հրաշքի համագործակցութեամբ ոչինչէն կերտուած Նորանկախ հայրենիքը: Ծատուրեան նաեւ թուեց Հայաստանի կառավարութեան իրագործումները՝ կրթական, դիւսնագիտական, ընկերային թէ այլ ոլորտներու մէջ եւ դրուատեց Աղբալեանի, Լեւոն Շանթի եւ անոնց նմաններուն նուաճումները:

Շար.ը՝ Է 2

ԿԸ ՎԱՏԱՀԻՆ

Կարելոր է վստահու թիւնը:

Մարդկային փոխյարաբերութեան մէջ մեծ է անոր դերը: Բան մը, որ ժամանակի ընթացքին կը կերտուի ու կը զարգանայ, ճիշդ այդ պատճառով ալ, երբ «վստահութիւնը կոտորի», իրեն հետ կը կոտորի նաեւ յարաբերութիւնը՝ վերջ տալով ամէն բանի:

Դիւրին չէ վստահութիւն ներշնչել, դիւրին ալ չէ վստահիլ: Իսկ աւելի դժուարը այն է, երբ այդ մէկը պիտի կատարուի ժողովուրդ-կուսակցութիւն, ժողովուրդ-կազմակերպութիւն կամ միութիւն յարաբերութեան ծիրին մէջ:

Հայ յեղափոխական դաշնակցութիւնը, իրեն հետ ունենալով իր հովանաւորութիւնը վայելող ուղեկից միութիւններն ու կազմակերպութիւնները, իր տարիներու գործունեութեամբ կրցած է այդ վստահութիւնը ներշնչել, իսկ ժողովուրդն ալ իր վստահութեամբ առաջով եւս ամրապնդած է ժողովուրդ-կուսակցութիւն կապը:

Կապ մը, որ 130 տարւան պատմութիւն ունի:

Կապ մը, որ արդիւնք է գործի եւ նուիրումի:

Կապ մը, որ միշտ առկայ է եւ միշտ աւելի կ'ամրանայ դժուար օրերուն:

Ոմանք հաւանաբար ծաղրանքով մօտենան այս գաղափարին, ոմանք ծիծաղին, եւ ոմանք ալ ըսեն՝ «ժամանակին այդպէս էր, հիմա՝ ոչ»:

Հարց չէ, փորձեմ քանի մը օրինակ նշել: Օրինակներ ներկայէն, ոչ պատմութեան էջերէն, որովհետեւ բոլորն ալ գիտեն, թէ պատմութիւնը լեցուն է օրինակներով:

Այսօր համայն մարդկութիւնը, յատկապէս լիբանանահայութիւնը կը գտնուի դժուար փուլի մը մէջ: «Քորոնա» ժահիրի աւերներուն կողքին, Լիբանանի մէջ տնտեսական տագնապը եւ անգործութիւնը աւելի կը բարդացնեն կացութիւնը: Եւ ճիշդ այս օրերուն վստահութեան օրինակները կը բացայայտուին:

Սկսիմք Դաշնակցութեան ակումբներէն: Վայր մը, որուն գոյութիւնը ինչ-նչի վստահութիւն կը ներշնչէ ժողովուրդին: Առաջին վայրը, ուր բոլորը կը դիմեն, ամեն տեսակ օժանդակութեան համար, ամեն տեսակ հարցի կամ խնդրի լուծում գտնելու: Դիմած են անցեալին, որովհետեւ կը վստահէին, կը դիմեն այսօր, որովհետեւ տակաւին կը վստահին:

Այս օրերուն ալ բաց են ակումբներու դռները, եւ հոն ներկայ են կամաւորները, որոնք կ'օգնեն բոլորին անխտիր՝ զանազան օժանդակութիւններով, հաւաքական աշխատանքով:

Ակումբներու կողքին, ժողովուրդը կը վստահի ԼՕԽ-ին, ուր այսօր բազմապատկուած են օժանդակութիւնները, որովհետեւ բազմապատկուած են կա-

ՆՈՐԵՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ

Շար.ը՝ Է 2 4

ՄԱՀԱԶԻ

Տիկին Սիլվա Գաբրիէլեան եւ զաւակները՝ Միռօ եւ Հրակ Օրդ. Այտա Գաբրիէլեան եւ համայն ազգականներ կը գումեն իրենց ամուսնոյն, հօր եւ եղբօր

ԲԱՖՅԻ ԳԱՐԻԲԷԼԵԱՆԻ

անակնկալ, մահը որ պատահեցաւ հինգշաբթի, 28 մայիսին Լոս Անճելըսի մէջ

ԿԱՐՊԻՍ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Գիտէի, որ հիւանդութենէ կը տառապէր եւ փորձեցի քանի մը անգամ տեսնուիլ: Հեռաձայնեցի. Պուրճ Համուտ էր: Խօսեցանք. շատ հանգիստ չէր: Տեսնուեցանք, զրուցեցինք:

Յետոյ իմացայ, որ հիւանդանոց փոխադրուած է: Նոյն օրերուն, ծանր դէպք մը անցընելով, ես կը մնայի տունը՝ շարժելու անկարող: Հագիւ հանգըտացած՝ փափաքեցայ այցելել: Իմացայ, որ փոխադրուած է Այնճար:

Ժամանակին նեղուած էիք իրարմէ, եւ մարդիկ փորձած էին աւելի խորացնել այդ նեղութիւնը: Չէին յաջողած, որովհետեւ իմ եւ իր այլ մտերիմ ընկերոջ մը միջամտութեամբ հարցը բարուր լուծում գտած էր:

Ճանչցուած էր My Way Կարպիս, ոչ միայն Պուրճ Համուտի ժողովուրդին համար, այլ կարծեմ ամբողջ Լիբանանի մէջ: Մարդիկ, որոնք անձամբ զինք չէին ճանչնար՝ իբրեւ մարդ, իր հաստատութեան անունով կը ճանչնային: Դարձած էր Արաքս փողոցի ամենէն յայտնի վաճառատներէն մէկը, որ կը կոչուէր My Way: Իսկ ես եւ հին ընկերներ զինք գիտէիք «Տեգիր Կարպիս» ծածկանունով: Սակայն My Way-ը մնաց տիրական, աւելի քան 30 տարի դարձաւ «Մարդարապատ» կոմիտէութեան պահակակեդրոնի անուններէն մէկը եւ մինչեւ օրս այդ շրջանը կը կոչւի այդպէս:

Կարպիս Գոյումճեան ծնած էր բարեկեցիկ ընտանիքի մը յարկին տակ եւ ինքնաշխատութեամբ, մեծ եղբայրներուն հետ միասին աշխատելով, ունեցած էին կարի աշխատանոցը: Ապագային ինք եւ տիկինը գործած էին միասնաբար, առանձին մեծաքանակ կարի աշխատատեղիով: Ապա, փորքաքանակ վաճառատուն մը ունենալով, իր կեանքի ասպարեզը այդպէս շարունակած է: Ուներ 3 զաւակներ:

Կուսակցական կրթութիւն ստացած էր փոքր տարիքէն՝ անդամակցելով «Ռոստոմ» պատանեկան միութեան եւ դարձած Յարութ Բեպպաճեանի (Կայծակ) ամենէն չար եւ փոթորկոտ տղոցմէ մէկը: Ընկ. Կայծակը յաճախ կը պատմէր պատմութիւններ իրենց այդ չար ու խնայէր խումբին մասին, որուն անդամները գրեթէ հեռացան այս աշխարհէն: Քանի մը հոգի տակաւին կենդանի են: Բայց այդ խումբէն Կարպիսը վերջիններէն էր: Անոնք բնաւ չուռցան «Մարդարապատ»-ը եւ օժանդակեցին մայրին կերպով:

ԸՆԿԵՐ ՄԸ

Շար.ը՝ Է 2 4

ԱՌԱՔԻՆԻ ՀԱՅՈՒՏԻՆ ԵՒ ՆՈՒԻՐԵԱԿ ԿՐԹԱԿԱՆ ՄՇԱԿԸ (ՄԱՐԱԿ ԱՆԹՕՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ)

«Վըսե՛մ կոչում: Հոգեակներու մէջ հըլու, Ըզգուշաւոր հպումներով՝ Կը զըրէ գուլն էջերու վրայ ապահով, Կը ցանէ սերն՝ անձնութիւններու քաղելու»:
ԴԱՆԷԼ ՎԱՐՈՒՄԱՆ

Պահ մը երեւակայեցն մեր կեանքը առանց ուսուցիչի ու կրթական մշակի, արդեօք ո՞վ պիտի ստանձնէր սերունդները պատրաստելու նուիրական աշխատանքը: Որքանո՞վ հայապահպանումը պիտի երաշխաւորուէր: Փաստօրէն հայոց գիրերու գիւտարար Մեսրոպ Մաշտոցի հիմնած առաջին դպրոցն ու իր առաջին ուսուցիչ դառնալու իրողութիւնը հայ աշակերտին միտքը կոփելու, լուսաւորելու եւ հայ օճախ կազմելու լաւագոյն երաշխիքը կը կազմեն: Այո՛, առանց հայ ուսուցիչի նուիրական ու անդադրում աշխատանքին մեր կեանքը խոպան պիտի ըլլար, իսկ մենք պիտի ձուլուէինք ու դառնայինք անգոյն եւ անդիմագիծ ազգ մը: Փա՛ռք Մեսրոպ Մաշտոցին եւ ոսկեղարու կերտիչներուն, որոնք ապագայի տեսլականով ապահովեցին սերունդներու գոյատեւումը, հայապահպանումը, մարդակերտումը եւ վերջապէս հայու ինքնուրոյն նկարագրի կերտումը:

Լիբանանահայ կրթական կեանքի տերեւաթափը կը շարունակուի: Եւ սիւս քառասուն օրեր առաջ հոդին յանձնուեցաւ ազգային, կրթական կեանքին մէջ բեղուն գործունեութիւն ունեցած ազիւ ու առաջինի հայուհի Մարալ Անթօնիան աննշանցած մարմինը:
Ան ծնած էր 1956-ին: Կրտսեր զաւակն էր խարբերոցի Սուրեն եւ Լուսին Անթօնիաներուն, որոնք Ցեղապաշտութեան արհաւիրքը ճաշակած էին եւ կազմած հայաբոյր ու ազգային ընտանիք մը: Անթօնեան ընտանիքը ազգին պարգեւեց երեք զաւակներ, որոնք առաւելագոյն յանձնառութեամբ իրենց անմասնորոգ նուիրումով հայ մշակոյթի, դպրութեան զանաւարտին ներդրում ունեցան: Հայ յեղափոխական դաշնակցութեան սկզբունքներուն, ուղեգիծին անշեղ ու հաւատարմոր անդամները մնացին մինչեւ իրենց կեանքին վերջին շունչը:

Մարալ Անթօնեանը նախակրթութիւնը ստացած էր Էշրեֆիէի Ազգային Ղազար Չարքը (այսպէ՛ս Ազգային Գ. Չաթալպաշեան) վարժարանին մէջ: Ապա յաճախած է Հայկազեան համալսարան, ուրկէ վկայուած է հոգեբանութեան ճիւղէն պատկաւոր արուեստից վկայականով, իսկ Պերյուրի մեթոդիկեան համալսարանէն վկայուած է մագիստրոս վկայականով իբրեւ խորհրդատու հոգեբան եւ դարձած այս ճիւղը աւարտած լիբանանահայ առաջին ուսանողուհին: Ան ուսուցչական պաշտօն վարած է Յովակիմեան-Մանուկեան, Ղազար Չարքը (այսպէ՛ս Ազգային Գ. Չաթալպաշեան) եւ Հագփիէի անգլիական դպրոցներուն մէջ:

ԿԱՐՕ ԱՂԱՋԱՐԵԱՆ

Շար.ը՝ Է 2 4

ՃՈՐՃ ՖԼՈՅՏԻ ՄԱՀԷՆ ԵՏՔ ...

Շարունակուած Ա. Էջէն

Բողոքի ցոյցերն ու անկարգութիւնները բաւական ծաւալեցան եւ նոյնիսկ հակակշիռէ դուրս եկան երբեմն՝ վերածուելով բռնութիւններու արիւնալի բախումներու։

Անկարգութիւններէն ամէնէն շատ վնասուած քաղաքներէն մէկը Լոս Անճելըսն է։ Զալիֆօրնիոյ նահանգապետ Կեւին Նիւսըմ քաղաքին մէջ կրակմարի ժամ յայտարարեց եւ Ազգային պահակազուկողը դրաւ պատրաստ վիճակի մէջ՝ արտակարգ իրավիճակին միջամտելու համար։

Քաղաքին մէջ անկարգութիւններու ընթացքին թալանւեցան խանութներ, ներառեալ շատ նշանաւոր Մելոզ Ե Ֆէյրֆաքս փողոցներուն մէջ տեղի ունեցան իրկիզումներ։ Ոստիկանութիւնը ռետիւն փամփուշտներով կրակեց եւ մահակներով հարուածեց ցուցարարները, ինչպէս նաեւ հարկւրաւոր ծերեակալութիւններ կատարեց։

Նիւ Եորքի մէջ ցուցարարները հաւաքուեցան Նշանաւոր «Թայգմ սըուեր»-ի իրապարակին վրայ, որ քաղաքին սիրտն է։ Հոն ոստիկանական ինքնաշարժը ճեղքեցին ցուցարարներու շարքերը՝ զանոսք ցրուելու նպատակով։ Քաղաքապետ Պիլ տէ Պլազիո ըսած է, թէ ստեղծուած կացութեան մեղքը ցուցարարներուն ուսերուն է, սակայն քոնկրետական Ալեքսանտրիա Օլասիօ-Զորթես Նշած է, որ քաղաքապետին մեկնաբանութիւնները անընդունելի են, եւ ան պէտք չէ արդարացնէ ոստիկանները։

Նշենք, որ Ֆլոյտի սպանութեան դէմ բողոքի ցոյց տեղի ունեցաւ նաեւ Բրիտանիոյ մայրաքաղաք Լոնտոնի մէջ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ Ա. ...

Շարունակուած 3-րդ էջէն

Ան մէքերեց Աղբալեանի հետեւեալ խօսքը. «Երգը չթողեց, որ մարտիկ դառնամ, սուրը չթողեց, որ երգիչ դառնամ» ու լուսարձակի տակ առաւ Աղբալեանի կրթական իրազօրծումները։

«Դժբախտաբար, Հայաստանի անկախութեան կեանքը երկար չեղաւ, ուրիշներու նման, Աղբալեան եւս բանտ նետուեցաւ, բայց բարեբախտաբար, փետրուարեան ապըստաբութիւնները զինքն ու ընկերները ազատեց բանտէն», ըսաւ ան՝ շարունակելով. «Մետրի դաշնագիրը, որ կ'ամրագրէր Հայաստանի սահմանները, շուտով պիտի մոռցըւեր տխրահռչակ Լոզանի դաշնագիրով»։ «Այսուամենայնիւ, Հայաստանի հանրապետութիւնը կերտող հիմնադիրներ հասան Սփիւռք ու իրենց հետ բերին ոգեկան Հայաստանը, ոգեղէն՝ Եութեամբ՝ Շանթ, Աղբալեան, Նժդեհ, Օհանջանեան, Վրացեան ու շատ-շատ ուրիշներ»։ Բանախօսը նաեւ բարձր գնահատեց անկախութեան կերտիչներու ուշագրաւ մօտեցումը հայ իգական սեռին նկատմամբ, երբ խորհրդարանական առաջին ընտրութեան իսկ երեք հայուհիներ ընտրուեցան պատգամաւոր եւ հեռաւոր Ճափոնի մէջ Տիանա Աբգար Նշանակուեցաւ դէսպան։

Ապա Վաչէ Շատուրեան գուգահեռ մը զօճեց Հայաստանի Ա. Հանրապետութեան եւ ներկայիս հոն տիրող իրավիճակին միջեւ՝ հաստատելով, որ տարբերութիւնները խիստ հակասական եւ ուշագրաւ են։

Ապա կաթողիկոսական փոխանորդ Շահէ եպս. Փանոսեան փոխալեց իր սրտի խօսքը՝ շեշտելով, որ հայ ժողովուրդը իր բազուկին ուժով պարտադրեց իր գոյատեւման կամքը։

«Հաւաքուած ենք այստեղ Նշելու մեր ժողովուրդին անկախութեան տարեդարձը, դարերու ստրկութենէ ետք հայ ժողովուրդը իր բազուկի ուժով իր ապրելու կամքը պարտադրեց իր շրջապատին եւ ամբողջ աշխարհին։ Ահեղ մարտերով իր կամքը պարտադրող նահատակ մեր ժողովուրդի սերունդը այսօր անկաւին արեան ճամբով կ'ապրի ամբողջ աշխաշխարհի տարածքին», ընդգծեց ան։ «Պատիւ՝ անոնց, պատիւ՝ անոնց գոհաբերութիւններուն։ Յարգանքով կը խոնարհինք նուիրեալներու յիշատակին առջեւ, որովհետեւ անոնք մեր ժողովուրդի ճակտէն սրբեցին ստրկութեան դրոշմը՝ եւ մեր ազգութեան վերադարձուցին մեծծերու կարգին ոտքի կանգնելու իրաւունքը», ընդգծեց Շահէ եպս. Փանոսեան։ Այս առթիւ սրբազան հայրը շնորհաւորեց հայ ժողովուրդը՝ շեշտելով, որ հայ ազգի անկախութեան համար պարտաւոր ենք գոհաբերելու ամէն ինչ, որպէսզի յաւերժ ապրին Հայաստանն ու հայութիւնը։

Ձեռնարկի ընթացքին «Գինի լից» երգով հանդէս եկաւ լիբանանահայ երգիչ Յրաչ Կայծակեան։

Նշենք, որ ձեռնարկը միաժամանակ սփռուեցաւ առցանց «Ն. Աղբալեան» կոմիտէի եւ ՀՀԴ Լիբանանի Դիմատետրի էջերէն։

ԿԸ ՎՍՏԱՀԻՆ

Շարունակուած 3-րդ էջէն

Վստահութիւնը չէ՞ արդեօք, որ այսօր սփիւռքի գանազան շրջաններ կը մղէ մասնակցելու ու նախաձեռնելու լիբանանահայութեան օժանդակութեան աշխատանքներուն՝ նոյն միութիւններուն եւ նոյն կազմակերպութիւններուն ճամբով։

Վստահութիւնը չէ՞ արդեօք, որ կարելի կը դարձնէ ամիսներէ ի վեր գործող, ՀՀԴ-ի նախաձեռնութեամբ կազմըած «Քորուսան»-ի ճգնաժամային շտապի յաջող աշխատանքը, յատկապէս բոլորին հասնելու կարողութիւնը։

Ի վերջոյ վստահութիւնը չէ՞ արդեօք, որ քանի մը օրեր առաջ 82 երիտասարդներ մղեց մուտք գործելու Դաշնակցութեան շարքեր՝ երդուելով ծառայել ժողովուրդին։ Անոնք մուտք գործեցին, երդում տուին, որովհետեւ կը վստահին այս կուսակցութեան եւ գործնական քայլով իրենց պատրաստակամութիւնը յայտնեցին ա'յս օրերուն, այս դժուար օրերուն։

Քանի կը օրինակ, առանց մանրամասնութիւններու, որոնք կու գան եւ կը փախտեն, որ տակաւին կա'յ վստահութիւն այս կուսակցութեան, բոլոր կազմակերպութիւններուն եւ միութիւններուն հանդէպ։

Բան մը, որ վերջերս հարցականի տակ կ'առնուէր ոմանց կողմէ, որոնք կը կարծեն, թէ՝ «այդ օրերը անցած են»...

Չէ՞, տակաւին կը վստահին։ Ոմանք՝ գիտակցաբար, իսկ ոմանք անգիտակցաբար։ Ոմանք մնայուն կերպով, իսկ ոմանք ժամանակաւոր։ Ոմանք անշահախնդիր մօտեցումով, իսկ ոմանք շահեր հետապնդելով։

Բայց յստակ է, որ բոլորն ալ կը վստահին ու պիտի վստահին։

ԿԱՐՊԻՍ ԳՈՒՅՈՒՄՐԵԱՆԻ ...

Շարունակուած 3-րդ էջէն

Անդամակցեցան ՀՅԴ-ի շարքերուն։ Վրայ հասած էր արդէն Լիբանանի քաղաքացիական պատերազմը, եւ Կարպիսը առաջին իսկ օրէն եղաւ պատնէշի վրայ, դարձաւ ամենօրեայ ներկայութիւն Սարդարապատ շրջանի, Մետրպեան դպրոցի շրջափակի կեդրոնը, որմէ ետք այդ կեդրոնը փոխադրուեցաւ Արաքս փողոց եւ, ինչպէս վերը յիշեցի, կոչուեցաւ իր իսկ հաստատութեան անունով, ուր ալ մինչեւ օրս կոմիտեութեան աշխատանքները կը կատարուին որպէս My Way կեդրոն։

Ծանր օրերուն մնաց միշտ զինուոր։ Ապագային ստանձնեց պարտականութիւններ, որոնց յաջորդեց մէկ շրջան «Սարդարապատ» կոմիտէի անդամակցութիւնը։ Ծմոռցաւ ազգային կեանքը։ Միշտ ներկայութիւն դարձաւ Զառնակից Մանկացի վարժարանի հոգեբարձութեան աշխատանքներուն մէջ թէ՛ Նիւթական, եւ թէ բարոյական ներդրում բերելով զանազան աշխատանքներու։

Փոթորկուտ ընկեր էր։ Ամէն մարդ, որ զինք չէր ճանչնար, կրնար տարբեր գաղափար կազմել, բայց խորքը եւ հոգին, սիրտը այնքան փափուկ եւ մաքուր էին, որ երբեմն կոիւր կ'աւարտէր յուզումնախառն խօսակցութեամբ եւ հարցերը լուծելու այնպիսի ոճով մը, որ կը պակսի այսօրւան ընկերներուն մեծամասնութեան մօտ։

Ընկերասէր էր։ Տազնապող՝ դաշնակցական մարդու խնդիրներով։ Կը պատկանէր այն սերունդին, որ, հակառակ Հայաստանի անկախութեան, դեռ միտքին մէջ ուներ նախնին կարգի օրերը, սակայն միշտ Հայաստանն ու Արցախը սիրողն ու պաշտողն էր։

Վերջին շրջանին իրեն եթէ հարց տայիր՝ հետեւեալ նախադատութիւնը կը կրկնէր. «Իմ Հայաստանս Այնճարն է»։ Այնքան կապուած էր Այնճարին. զինք ճանչցողները կը վկայեն, որ, թէւ ինք մեծցած է ապրած էր Պուրճ Համուտ, Սարդարապատ շրջան, սակայն նոյնչափ եւ քիչ մը անելի ապրեցաւ Այնճար։ Սիրեց գիւղը, զայն սեպեց իր փոքր Հայաստանը, մնաց հոն մինչեւ իր կեանքին աւարտը։

Դեռ շատ բան կարելի է ըսել ընկերոջ մասին։ «Քորուսան»-ի պատճառով Լիբանանի մէջ տիրող պայմաններու բերումով չկրցաւ ներկայ գտնուիլ յուզարկաւորութեան, բայց վստահաբար զինք ճանչցող ընկերները, նաեւ Սարդարապատի շրջանի տղաքը միշտ պիտի յիշեն եւ յարգեն յիշատակը։

Խուսկ եւ մոմ իր յիշատակին։

ԱՌՎՔԻՆԻ ՀԱՅՈՒՎԻՆ ...

Շարունակուած 3-րդ էջէն

Ան նաեւ Համազգայինի Մ. եւ Հ. Արսլանեան ճեմարանին մէջ մանկապարտիզպանուիիներու յատուկ դասընթացներուն հոգեբանութիւն դասաւանդած է։ Մարալ Անթօեանի կեանքը այնքան ալ հեգսասաի չընթացաւ։ Կեանքի ինչ դիպումածով անակնկալօրէն կորսնցուց իր եղբայրը (1976-ի Լիբանանի քաղաքացիական պատերազմի տարիներուն) եւ քոյրը՝ դարձեալ կրթական նուիրեալ մշակ օրդ. Վարդուկը (2017-ին ինքնաշարժի արկածի հետեւանքով)։

Սակայն Մարալ Անթօեանը խարբերոցի հայու տոկուն նկարագիրով պայքարեցաւ կեանքի բոլոր դժուարութիւններուն դէմ։

Նախ իր ուսումը, փորձառութիւնն ու ամբարած գիտութիւնը ի սպաս դրաւ լիբանանահայ կրթական կեանքին։ Երկար տարիներ ուսուցչական պաշտօն վարեց, եւ այսօր իր բազում աշակերտները երախտիքով կը յիշեն զինք։ Ան բեղուն գործունեութիւն ունեցաւ Ազգային իշխանութեան Ուսումնական խորհուրդին մէջ իբրեւ տարիներու գործավար (ատեն մըն ալ Ուսումնական խորհուրդի անդամ դարձաւ)։ Իրեն համար գործավարութեան պաշտօնը առաքելութիւնն էր։ Ան լաւապէս կը հասկնար ուսուցիչներուն տագնապն ու դժուարութիւնները։ Միշտ ժպիտով խորհրդակցուի դէր կատարեց եւ դրական մօտեցումով փորձեց թափանցել ուսուցիչներուն հոգեկան աշխարհը։ Կասկածէ վեր է, որ տնօրէններուն, ուսուցիչներուն, աշակերտներուն յաջողութիւնը կ'ոգեւորէին զինք։ Այս ձեւով ան կը հաւատար՝ հայ դպրոցի առաքելութեան։ Իր ասպարեզէն հանգստեան կոչուելու առիթով Ազգային առաջնորդարանը 29 դեկտեմբեր 2017-ին, գնահատանքի ձեռնարկ մը կազմակերպեւ եւ զինք պարգետարեց յուշանդւերով մը։

Ան իր կեանքի կարեւոր մաս մըն ալ յատկացուց ազգային կեանքին։ Ան դարձաւ հարբերոցիներու հայրենակցական միութեան անդամ՝ իր արմատներուն, հայրենի բարքերուն միշտ հաղորդ մնալով։ Ատեն մը մաս կազմեց «Թռչնոց բոյն»-ի խնամակալութեան՝ հոն եւս իր պարտականութիւնը լիուկի կատարելով։ Հայ մշակոյթի հանդէպ իր սերը արտայայտեց մաս կազմելով Համազգայինի «Ռուբէն Չարդարեան» մասնաճիւղին։ Եւ վերջապէս իր գաղափարական սնունդն ու հաւատալիքները դրսեւորեց մաս կազմելով Հայ յեղափոխական դաշնակցութեան՝ տարիներով դառնալով հաւատաւոր անդամը ՀՀԴ «Հրայր Մարուխեան» կոմիտէին։

Մարալ Անթօեան քննադէպ չկազմեց, բայց շնորհի իր հեգսահամբոյր հոգիին, սիրտին, ծառայափրութեան, պարկէշտութեան, ուղղամտութեան եւ ազնուութեան, շահեցաւ բազմաթիւ հայրողիներու բարեկամութիւնը, որոնք սեպեց իր հարազատներն ու ընտանիքը։

Դժբախտաբար անողոք հիւանդութիւնը աւելի քան տասնիինգ տարիներ առաջ բոյն դրած էր օրդ. Մարալին մարմինին մէջ։ Ան մաքառեցաւ հիւանդութեան դէմ հոգեկան բարձր տրամադրութեամբ, մինչեւ որ անիկա տապալեց զինք, եւ ան կեանքին իրաժէշտ տուաւ։ Քրիստոսի երուսաղէմ մուտքին՝ Շաղկազարդի օրը։ Նկատի ունենալով աշխարհի դիմագրաւած «Քորուսա» համավարակը՝ իր յուղարկաւորութիւնը կատարուեցաւ շատ սեղմ թիւով բարեկամներու ներկայութեան։ Սակայն իր վատտակն ու խօսուն կեանքը երբեք փոշիի մէջ պիտի չմնան եւ Դանիէլ Վարուժանի բառերով՝ «Պիտ' մընայ լոյկ անոր այս մեծ միխթարանը»։

Թէ՛ իր կեանքն իր սաներուն մէջ կ'ապրի՝ դեռ»։

Հանգի՛ստ յոգնատանջ ոսկորներուդ։

Յիշատակդ անթառա՛մ մնայ, օրդ. Մարալ։

ՀՅԴ ԼԻԲԱՆԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԸ ՅԱՐԳԵՑ ...

Շարունակուած Ա. Էջէն

Հայաստանի դեսպանը եւ ՀՅ Դաշնակցութիւնը ծաղկեպսակներ զետեղեցին պանթեոնին առջեւ, որմէ ետք տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն։ Օրւան խորհուրդը փոխանցեց ՀՅԴ Բիւրոյի նախկին անդամ Տիգրան Ծինպաշեան։



Ան իր խօսքին մէջ ըսաւ. «Արտակարգ եւ արտասովոր կացութեան պատճառով մայիսեան ժողովրդային բազմամարդ օտոնակատարութեան փոխարէն (որուն սովոր էինք) կը կատարենք, փոքրաթիւ ֆիզիքական մասնակիցներով, ժամանակակից արհեստագիտութեան շնորհիւ, թերեւս աւելի բազմամարդ՝ բազմահազար մասնակիցներով ոգեկոչումներ։

«Ամէն տարի ոգեկոչած ենք այս պատմանը շիռ իրողութիւնը, որ Մեծ Հայքի թագաւորութեան անկումէն, այսինքն 1045-ին Անի մայրաքաղաքի Բիւզանդական կայսրութեան յանձնումէն ուղիղ 873 տարի ետք, Մեծ Հայքի մէկ փոքր հետուածին վրայ մենք կրկին պետականութիւն ունեցանք։ Մայրաքաղաքը ունեցանք։

«Պետականութենէ զուրկ գրեթէ 9 դարերու ընթացքին մեր հայրենիքը կռուախնձոր դարձաւ ժաշողդական ներխուժողներու միջեւ։ Հայ ժողովուրդը յաճախ պայքարեցաւ, բայց աւելի շատ ու յաճախ լքեց իր երկիրը ու տարածուեցաւ աշխարհով մէկ։

«Ազգերու պատմութիւնը իրենց հայրենիքներու պատմութեանն է. Ֆրանսայի՝ պատմութիւն, Գերմանիոյ՝ պատմութիւն եւ այլն, մերը՝ հայոց պատմութիւն է, հայերու պատմութիւն է, որովհետեւ որոշւած սահմաններով եւ Հայաստան անունով պետական կազմաւորում երկարատեն չենք ունեցած։ Տեղական կայծղւումներ եղեր են հոս ու հոն, ինքնապաշտպանական պայքարներ ունեցող ենք, բայց նաեւ շարունակ ենթարկուեր ենք բռնազաղթի, ոչ միայն բռնազաղթի, այլեւ հեռացեր ենք մեր երկրէն՝ կամաւոր, գանազան հեռաւոր վայրերու մէջ ստեղծելով հայկական կոչեակներ, հոգեւոր Հայաստաններ, որոնք ժամանակի մաշումով դարդրեւ են գոյութիւն ունենալէ, դարձեր են յուշ։

«Հայրենիքը լքելով հեռանալու ու հեռուներէ անոր ազատագրութիւնը ցանկալու սովորութիւնը մեր ազգային նկարագիրին առանձնայատկութիւններէն մէկն է, թէ՛ հետեւանք է հալածանքներու եւ բռնաճնշումներու ստեղծած այլասերման, չեմ գիտէր։ Մենք հիմա ալ նոյն կերպ կը վարկիք դժուարութեանց դիմաց, իրական կամ երեւակայածին անարդարութիւնները պատրուակ բռնելով, կը լքենք մեր բնակավայրերը՝ սկսելով մեր հայրենիքէն։

«1918 թուականի մայիսին տեղի ունեցածը ժխտումն է այս ազգակործան ունակութեան։ Հայաստանի մը գոյութիւնն իսկ ժխտող յափշտակիչին դիմաց թումբ կանգնելով, հայուն մնացած փոքր տարածութիւնը գրեթէ անելանելի պայմաններու մէջ արիաբար պաշտպանելով վերջին հողակտորը, ուր սեղմուած ենք, Հայաստանի մը ստեղծումը՝ այո՛, պատմակշիռ իրագործում է։ 30 մայիսի անկախութեան հռչակագիրը տակաւին կը յօսի «Հայկական գաւառներ» կոչուած անորոշ հողատարածքի մը մասին, որուն պատասխանատուութիւնը կը ստանձնէ Հայոց Ազգային խորհուրդը։

«Հայաստանի անկախութիւնը կերտած եւ շուրջ 2 ու կէս տարի՝ քանձեւ քառօր, հայկական գաւառները պետութեան վերածած ընտրութիւնը, անլուր գոհողութիւններ յանձն առած քաղաքական այրերը, գաղթական դարձան ու Հայաստան վե-

րադառնալու երազը իրենց սրտին՝ ապրեցան ու գործեցին Հայաստանէն հեռու։ Ամէն տեղ անոնք անդուլ անկախութեան գաղափարը վառ պահեցին, ճգնեցան, հոգեւոր Հայաստաններ ստեղծեցին եւ սփիւռքացած արտասահմանի գաղթա-

կան հայութեան մօտ առկայծ պահեցին միացեալ, ազատ եւ անկախ Հայաստանի տեսլականը։

«Անկախ Հայաստանը չունեցաւ հանրապետութեան նախագահ։ Խորհրդարանական կառավարման վարչակարգը իրել պետական առաջին անձնաւորութիւն կը ճանչնար խորհրդարանի նախագահը։ Հա-



յաստանի Հանրապետութեան առաջին խորհրդարանը Հայոց Ազգային խորհուրդի հիման վրայ ստեղծուած Հայաստանի խորհուրդն էր, որուն նախագահը՝ Աւետիք Սահակեանը, ծանօթ Հայր Աբրահամ անունով, կը հանգիլ այս պանթեոնին մէջ։ Փաստօրէն, Հայաստանի առաջին նախագահին աճիւնն է այստեղ։ Հայաստանի Հանրապետութեան մէջ այլազան պետական պաշտօններ վարած ուրիշներու հոյլի մը աճիւնները եւս ամփոփուած են Լիբանանի գերեզմանատուներու մէջ։ Թուեց ամէնէն ուշագրաւները. Սիմոն Վրացեան, Նիկոլ Աղբալեան, Լեւոն Շանթ, Կարօ Սատունի, Վարվառէ Սահակեան, Լույս Սատունի, Սասունցի Մուշեղ, Արշակ Յովհաննիսեան, Արտաշէն Յովսէփեան (Մայիսա), Մուրատ Պետրոսեան, Վարդան Շահպագ, Վահան Փափագեան (Կոմս)։ Տասնեակներով ուրիշներ ալ, տարբեր երկիրներու տարբեր գերեզմանատուներու մէջ ցրուած կը մնան։

«Հայրենի հողէն զրկուած այս շիրիմները մեզի կը յուշեն, որ Հայաստանը վերացական գաղափար չէ։ Լեռնաշխարհն է ապրող ու ստեղծագործող ազգի մը, հայ ազգին, որ, թէեւ ցրուած երկրագունդի բոլոր հորիզոնականներու տակ, հաւատարիմ կը մնայ 28 մայիս 1919-ին յայտարարած Միացեալ, ազատ անկախ Հայաստանի հռչակագիրին, որուն համաձայն, ներկայիս գոյութիւն ունեցող Հայաստանի Հանրապետութիւնը եւ Արցախի Հանրապետութիւնը պիտի ծաւալին ու վերածուին Մ